ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

18.05.2022թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ /ՏԻՄ-երի ներկայացուցիչներ, համայնքային սոցիալական աշխատողներ/:

Օ ր ա կ ա ր գ ա ն ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից իրավական մի շարք ակտերի նախագծի վերաբերյալ կարծիք ներկայացնելու մասին տեղեկատվության հաղորդում:
   - «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետությունում սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին նպատակային սոցիալական աջակցություն ցուցաբերելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին նպատակային սոցիալական աջակցություն ցուցաբերելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքների, «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին», «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին», «Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մասին:

   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. Տեղեկատվության հաղորդում իրականացված աշխատանքների մասին:
   - ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. առաջին եռամսյակում իրականացված աշխատանքների մասին:

     /Զեկ.՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի ղեկավար Սուսաննա Ապրեսյան/

   - «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության "EREO"անկախ կյանքի ռեսուրս կենտրոնի կենտրոնի /ԱԿՌԿ/ գործունեության մասին:
     - ✓ «EREO» ԱԿՌԿ-ի ստեղծման պատմությունը, նպատակներն ու գործունեության ուղղությունները:
     - ✓ «EREO» ԱԿՌԿ-ի կողմից առաջարկվող ծառայությունները, դրանց բնույթը, տեսակներն ու ծառայություն մատուցողների գործառույթները:

- ✓ «EREO» ԱԿՌԿ-ի կայունության, շարունակականության և ՏԻՄ-երի հետ արդյունավետ համագործակցության կարևորությունը: Շփումներ ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարների, համայնքապետարանների աշխատակիցների, սոցիալական աշխատողների հետ:
- ✓ «EREO» ԱԿՌԿ-ի ձեռքբերումներն ու հաջողությունները:
- ✓ Հարց ու պատասխան:

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ Անուշ Ասլանյան, "EREO"անկախ կյանքի ռեսուրս կենտրոնի կենտրոնի աշխատակիցներ՝ Օֆելյա Վիրաբյան, Տիգրանուհի Մինասյան, Ռուբեն Փարսադանյան, Վահան Սարգսյան, Հասմիկ Մխիթարյան/

3. Հայ օգնության ֆոնդի գործընկերային ծրագրերում 15-29 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական հմտություններ հաղորդելու կամ վերարակավորման դասընթացներում ընդգրկելու մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

4. Պարգևատրություն /Հանձնաժողովի հիմնադիր անդամ, «Մանկական կենտրոն» ՀԿ նախագահ Թամարա Գրիգորյան/

5. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վեց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Անհրաժեշտության դեպքում կազմակերպել մարզպետարանի տարբեր ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցների հարց ու պատասխանի ձևաչափով թեմատիկ հանդիպումները Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի նիստերի օրակարգում:

բ/ Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետարանի կայք-էջում տեղադրելու համար:

2. Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աննա Գասպարյանին՝

Ապահովել աշխատանքների հրապարակայնությունը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Կազմեց՝ Վ.Ջաղինյանը /2-33-99/